

Մշակույթ

«ՇՈՒՇԻ» ՊԱՐԱԽՄԲԻ 15-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Նյու Յորքի (ԱՄՆ) սուրբ Վարդան Մայր տաճարի «Շուշի» պարախումբը հիմնադրվել է 1992-ին գեղարվեստական ղեկավար ու բալետմայստեր Սեդա Պասկալյան-Քանդարջյանի ջանքերով: Սկզբնական շրջանում պարային համույթը բաղկացած է եղել մի խումբ պատանիներից, որոնք Հայաստանի սահմաններից դուրս ներկայացրել են հայ մշակույթը: Իսկ երբ հեռավոր Ամերիկայում լուր է հասնում, որ Արցախի սիրտը՝ Շուշին ազատագրվել է ազերիներից, հայրենասեր մի խումբ պատանի ու ավագ սերնդի ներկայացուցիչներ ոգեւորված որոշում են, հատուկ նախապատրաստվում ու 1995-ին՝ Շուշիի ազատագրման 3-րդ տարեդարձի առիթով հայկական պարախումբը անվանում «Շուշի»:

15 տարվա ճանապարհ անցած պարախումբը մեծ ճանաչում է ձեռք բերել՝ բազմաթիվ հյուրախաղեր տալով տարբեր երկրներում ու մշտապես արժանացել ներկաների ջերմ ընդունելությանը՝ հայ արվեստն ու մշակույթը արժանվույնս ներկայացնելու համար: Նշենք, որ համույթի 110 սաները 5-25 տարեկան են եւ նրանց մեջ խանդավառությունը երբեք չի թուլանում, այլ ընդհակառակը, ընդլայնում են շրջագայությունների աշխարհագրությունը: «Շուշի» պարային համույթը բազում ելույթներ է ունեցել թե՛ հայ, թե՛ օտար հանդիսատեսի առջեւ՝ Կանադայում, ԱՄՆ-ի տարբեր նահանգներում եւ այլուր: Պարախմբի երազանքը մշտապես եղել է մայր հայրենիքում հանդես գալը: Եվ ահա նրանց երազանքը իրականացավ 2000-ին, երբ Խոր Վիրապում իրենց համերգը նվիրեցին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին, իսկ 2005-ին՝ Մեծ եղեռնի 90-րդ

տարելիցին: Հայկական պարաօլիմպիկ համերգային ծրագրերով բազմիցս հանդես է եկել երգիչներ Պապին Պողոսյանի, Շուշան Պետրոսյանի, Տիգրան Պետրոսյանի եւ այլոց հետ: Իսկ 2006-ին Փասադենայում ու Կալիֆոռնիայում «Շուշի» պարաօլիմպիկ հատուկ համերգային ծրագիր է պատրաստել ու նվիրել Թեքեյան մշակութային միության 60-րդ տարեդարձին, որին մասնակցում էին երգիչներ Հովիկ Գրիգորյանը, Սալաի Մայիլյանը, Հերմինե Թումանյանը, Ռուբեն Թելունցը, Արմեն Հովհաննիսյանը, բանաստեղծուհի Նունե Ավետիսյանը:

2007-ի սեպտեմբերին Բրուկլինի «Միլենիում» թատրոնում «Շուշի» պարային համույթի համերգը նվիրված էր իրենց գործունեության 15-ամյակին, իսկ հոկտեմբերին Նյու Յորքում «Հայաստան» հիմնադրամի 15-ամյակին նույնպես մի հրաշալի համերգ էին նվիրել:

Հայաստան երրորդ այցը նվիրված էր հենց «Շուշի» պարաօլիմպիկ 15-ամյակին: Հուլիսի 3-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը լեցուն էր հանդիսատեսներով: Տոմսերը մի քանի օր առաջ արդեն սպառվել էին եւ մեծ դժվարությամբ կարողացա երկու տոմս գտնել: Հաջորդ օրը միայն «Ազգը» ստացավ հրավեր ու մասնակցեց համերգին: Պետք է ասեմ, որ գեղեցիկ կազմակերպված համերգային շատ խիտ ծրագիրը թերեւս կարելի էր մի քիչ կրճատել, քանզի մոտ 4 ժամ շատ դժվար է ամառվա շոգին դիմանալ: Հայկական պարի էլեմենտները պահպանած, նազանքով ու հեզությամբ իրար էին հաջորդում պարերը, որոնք զուգահեռաբար ընթանում էին անվանի հայ երգիչներ Հովիկ Գրիգորյանի, Սոսե Մարտիրոսյանի, Արմեն Հովհաննիսյանի, Հերմինե Ամիրյանի, Սալբի Մայիլյանի, Լեյլա Սարիբեկյանի հրաշալի կատարումներով: Համերգին ելույթ ունեցավ նաեւ Նյու Յորքի օպերային թատրոնի երգիչ Վաղարշակ Օհանյանը եւ ասմունքող Անահիտ Իշկանյանը: Համերգին բազմաթիվ հյուրեր ու օտարերկրացիներ էին եկել: Ներկա էին նաեւ ՀՀ ԱԳ սփյուռքի հարցերով կոմիտեի նորանշանակ նախագահ Հրանուշ Հակոբյանը, գրականագետ, ՀՀ մշակութային նախարարի խորհրդական Երվանդ Ազատյանը: Ցավոք, համերգի ծրագիրը տպված էր անգլերենով եւ ներկաներին այդ փաստը վրդովեցրեց, քանզի ՀՀ-ում պետական լեզուն հայերենն է:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանու ներքո Նյու Յորքի ս. Վարդան մայր տաճարի «Շուշի» պարաօլիմպիկ մի քանի տասնյակ սաներ՝ 7-25 տարեկան, հայրենի բեմում, չնայած սիրողական մակարդակին, մեկ անգամ եւս ապացուցեցին, որ զորու են մշտապես վառ պահել հայրենի մշակութային նկատմամբ հատուկ սերն ու ջերմությունը, օտար ավերում հայեցի դաստիարակվել ու այն փոխանցել սերունդներին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ